ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 16.12.2008
COM (2008) 865 վերջնական

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության կատարելագործված ռազմավարական շրջանակ

{ SEC(2008) 3047}
{ SEC(2008) 3048}

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության կատարելագործված ռազմավարական շրջանակ

(Տեքստը ըստ ԵՏՏ-ի չափանիշի համապատասխանության)

1. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կրթության և ուսուցման կատարելագործված համակարգերի միջոցով հմտությունների ավելի բարձր մակարդակների ձեռքբերումը Եվրոպայի ռազմավարության էական մասն է կազմում՝ արձագանքելու հետագա այնպիսի մարտահրավերներին, ինչպիսին է ծերացող հասարակությունը, և ապահովելու տևական, գիտելիքահեն աճի ու աշխատանքների բարձր մակարդակներ, որոնք Լիսաբոնի ռազմավարության հիմքն են կազմում: Գիտելիքը, հմտություններն ու կարողությունները սահմանում են անհատի հնարավորություններն աշխատաշուկայում հաջողության հասնելու և հասարակությունում ակտիվ դերակատարություն ունենալու համար: Նրանք կարևոր են սոցիալական համախմբվածության, ինչպես նաև ձեռնարկությունների և ամբողջ տնտեսության մրցունակության ու նորարարական կարողության համար:

Ինչպես սահանված է *Նոր Աշխատանքների համար Նոր Հմտությունների* վերաբերյալ նախաձեռնությունում, որը նաև տպագրված է այս տարվա Լիսաբոնի փաթեթի հետ, աշխատաշուկայի փոփոխությունները կպահանջեն և՛ բնակչության հմտությունների կատարելագործում, և՛ հմտությունների զարգացման քաղաքականություններ, որոնք ավելի համապատասխան են աշխատաշուկայի ներկայիս և ապագայի պահանջներին: Սա կարող է պատահել միայն այն դեպքում, եթե ցկյանս ուսումնառությունը դառնա իրականություն, ոչ թե կարգախոս՝ թույլ տալով մարդկանց ձեռք բերել առանցքային կարողություններ, արդեն հնացած և նոր հմտություններ իրենց կյանքի ընթացքում, ինչպես նաև եթե կրթության և ուսուցման համակարգերը ավելի ակտիվ արձագանքեն փոփոխություններին ու լինեն ավելի բաց աշխարհի համար:

ԵՄ անդամ պետություններն ու Հանձնաժողովը «Կրթություն և Ուսուցում 2010» աշխատաքային ծրագրի շրջանակներում սերտորեն համագործակցել են՝ աջակցելու կրթության և ուսուցման համակարգերի ազգային բարեփոխումներին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով անդամ պետությունների խիստ տարբեր մեկնակետերը՝ համակարգման բաց մեթոդը (ՀԲՄ)-ը մղել է գործընթացը բաշխված նպատակների մի շարք, որը

սահմանված է ըստ ընդհանուր ցուցիչների ու նշաձողերի և համապատասխանում է աճի ու աշխատանքների համար ամբողջացված ուղենիշներին: Վերջիններիս նպատակն է որակյալ կրթության և հմտությունների, նորարարությանը խթանելու և նախաձեռնական գործելակերպին նպաստելու միջոցով մեծացնել ներդրումները մարդկային կապիտալի մեջ[1]: Համագործակցության ներկայիս շրջանակը, որը համաձայնեցվել է Կրթության Խորհրդի կողմից 2001/02թթ., մոտենում է եզրագծին, և սա այն համապատասխան կետն է, որտեղից կարելի է վերցնել հիմնապաշար ու առաջ շարժվել:

Հետևելով անդամ պետությունների և այլ հեղինակների 2008թ. ընթացքում ծավալած լայն խորհրդատվությանը՝ սույն զեկույցը առաջարկում է երկարաժամկետ ռազմավարական մարտահրավերներ՝ ուղղորդելու քաղաքականության համագործակցությունը մինչև 2020թթ. ընկած ժամանակահատվածը: Մարտահրավերները արտացոլում են կրթության և ուսուցման աջակցությունը Լիսաբոնի ռազմավարությանն ու նորացված Սոցիալական Օրակարգին: Զեկույցը նաև ընդգծում է ամենահրատապ գերակայությունները, որոնք արժանի են հատուկ ուշադրության 2009 և 2010թթ. նախնական ժամանակահատվածում: Սա, աշխատանքային կատարելագործված մեթոդների հետ, կմեծացնի կենտրոնացումը իրագործման վրա և նոր շրջանակը կդարձնի ավելի ճկուն՝ արձագանքելու և՛ որոշակի երկարատև պասիվությանը, և՛ նախաձեռնելու քաղաքականության համագործակցություն նոր մարտահրավերների մասին: Այն իր մեջ նաև ներառում է գրանցված առաջընթացի վրա վերակենտրոնանալու հնարավորություն՝ ի ցույց դնելու նոր խնդիրները, երբ դրանք ի հայտ են գալիս քաղաքականության երկխոսության ժամանակ, և տեղայնացնելու որոշումների համար անհարաժեշտ նպատակները, չափանիշներն ու զեկուցման մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են Աճի և Աշխատանքների հետագա ռազմավարության մինչև 2010թ. կայացվելիք որոշումների համար:

Այժմ, երբ ԵՄ ձգտում է նվազացնել առկա տնտեսական անկման հետևանքները և սահմանել աճի նոր չափանիշներ, ծայրահեղ անհրաժեշտ է, որ կրթության համար ներդրումների շարժիչ ուժը, որը և՛ արդյունավետ է, և՛ անաչառ, պահպանվի: Լավ քաղաքականությունները միաժամանակ կօգնեն դուրս գալ վերջին ժամանակների ցնցումներից և վստահությամբ հիմք կառուցել հետագա մարտահրավերներին արձագանքելու համար:

2. ՈՐՏԵ՞Ղ ԵՆՔ ԿԱՆԳՆԱԾ

Առաջընթաց և մարտահրավերներ

Կրթության և ուսուցման քաղաքականության պատասխանատվությունը ստանձնել են անդամ պետությունները: Եվրոպայի դերակատարությունն ազգային համակարգերի

[1] Ուղենիշներ 23,24,8,15

զարգացմանն աջակցելն է ԵՄ լրացուցիչ հենքային գործիքների, երկկողմ ուսումնառության և պատշաճ փորձի փոխանակման միջոցով:

Կրթության և ուսուցման քաղաքականության համագործակցությունը նպաստել է ցկյանս ուսումնառության ու որակավորումների համակարգերի ազգային բարեփոխումներին, բարձրագույն կրթության արդիականացմանը և ուսումնառության մեջ շարժունության ու որակավորումների որակին, ինչպես նաև թափանցիկությանը խթանող Եվրոպական գործիքների կատարելագործմանը: Սակայն գործընթացը էականորեն տարբերվում է անդամ պետություններում և գլխավոր հատվածներում այն անբավարար է: Հետևաբար, իրագործումը պետք է ուժեղանա: Ինչպես ցույց է տրված աղյուսակ 1-ում, նշածողերի մեծ մասը, որոնք սահմանել է Խորհուրդը 2010թ. համար, չեն հաղթահարվի: Եթե մաթեմատիկայի, գիտության և տեխնոլոգիայի նշածողը հաղթահարվել է 2003թ., ապա դպրոցը վաղ լքելուն, ավագ հանրակրթական կամ հետմիջնակարգային կրթությանն (միջնակարգ լրիվ ընդհանուր կրթությունից հետո) ուղղված առաջընթացն ու մեծահասակների մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը բավարար չեն՝ հասնելու նշանակետերին: Գրաճանաչության ցածր մակարդակներ ունեցող մարդկանց կատարողականությունը վատացել է[2]:

Ուստի 2008թ. Եվրոպական Գարնանային Խորհուրդը շտապեցրեց անդամ պետություններին հստակ քայլեր ձեռնարկել՝ էապես կրճատելու այն մարդկանց թիվը, ովքեր չեն կարողանում կարդալ բավարար, ինչպես նաև դպրոցը վաղ լքողների թվաքանակը՝ զարգացնելու վերաբնակչի կարգավիճակ ունեցող կամ անընդունակ խմբերի ուսումնառուների ձեռքբերման մակարդակները, ներգրավելու թվով ավելի շատ մեծահասակների շարունակական կրթության ու ուսուցման մեջ և խթանելու աշխարհագրական ու պրոֆեսիոնալ շարժունությանը[3]:

---

2 OJ C 86, 5.4.2008, էջ 1, SEC(2008) 2293

3 Եվրոպական Խորհրդի 2008թ. մարտի եզրակացությունները, 15պարագրաֆ

Աղյուսակ 1: 2010թ. 5 նշածողերը հաղթահարելուն ուղղված առաջընթաց (ԵՄ միջին)[4]



2.2 Կրթության և ուսուցման Եվրոպական համակարգերը լայն հեռանկարում

Լինելով լայն հեռանկարում՝ ԵՄ կրթության և ուսուցման կատարողականությունը ուղիղ համեմատական է աշխարհում լավագույնի հետ: Սակայն համեմտությունները այլ OECD երկրների հետ ԵՄ համար արձանագրում են չկատարված էական աշխատանքներ և՛ հանրակրթական, և՛ բարձրագույն կրթության մակարդակում:

Նշանավոր է այն փաստը, որ PISA-ի գրաճանաչության արդյունքները (15տ.) ցույց են տալիս, որ ԵՄ-ը՝ որպես ամբողջություն, ունի ցածր մակարդակի կատարողականություն ունեցող մարդկանց աճող ցուցանիշ: Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ ցուցանիշը Հարավային Կորեայում, Կանադայում և Ավստրալիայում համեմատաբար կայուն է և հեռու է ԵՄ միջին մակարդակից: Վերաբնակչությունը, որն այս ցուցիչի համար ԵՄ-ում ունի վատ կատարողականություն[5], համեմատաբար լավ հաջողություն ունի Կանադայում և Ավստրալիայում: Աղյուսակ 3-ը ցույց է տալիս, որ ԵՄ անդամ պետությունները որոշակի մակարդակում աշխարհում ունեն ամենալավ կատարողականությունը: Սակայն ելնելով անդամ մի քանի պետությունների կատարողականության վատ մակարդակից՝ սա համարվում է Եվրոպական մակարդակի էական մարտահրավեր:

[4] ՄԳՏ շրջանավարտների վերջին տվյալներ, գրաճանաչության ցածր մակարդակ ունեցողներ, 2006թ., Այլ 2007թ.

[5] COM(2008) 423.

Աղյուսակ 2: PISA-ի գրաճանաչության սանդղակում գրաճանաչության ցածր մակարդակ ունեցողներ (15տ.) ԵՄ-ում և ընտրված երրորդ երկրներում 2000 և 2006թթ. (Տվյալների աղբյուր՝ OECD)



Աղյուսակ 3: PISA-ի գրաճանաչության սանդղակում գրաճանաչության ցածր մակարդակ ունեցողներ (15տ.) ԵՄ-ում 2000 և 2006թթ. (Տվյալների աղբյուր՝ OECD)



Երկրորդ հերթին, ԵՄ գլխավոր մրցակիցներից շատերն ունեն կրթության երրորդային մակարդակի գիտելիքներ ունեցող մարդկանց ավելի բարձր ցուցանիշներ: ԵՄ միջինը 25-64տ. համար կազմում է 23%՝ համեմատած Ճապոնիայի 40%-ի, ԱՄՆ-ի 39%-ի, Ավստրալիայի ու Կորեայի 32%-ի և Նոր Զելանդիայի 27%-ի հետ:

Վերջապես, քանի դեռ ներդրումների արդյունավետության ապահովումը համարվում է ԵՄ հիմնախնդիր, Եվրոպայից դուրս գտնվող շատ երկրներ անհամեմատ ավելի շատ են ներդնում բաձրագույն կրթության մեջ, մասնավորապես սեփական ռեսուրսներից:

Մասնավոր ներդրումների ցուցանիշը (ԵՄ-ում ՀՆԱ 0.23%) շատ ավելի բարձր է և՛ Ճապոնիայում (0.76%), և՛ ԱՄՆ-ում (1.91%)[6]:

Այս համեմատությունները ցույց են տալիս, որ եթե Եվրոպան հաջողության հասնի համաշխարհային տնտեսության և հասարակության գիտելիքի առաջատար լինելու իր ձգտման մեջ, ապա այն պետք է նախևառաջ բարելավի իր կատարողականությունը այս հատվածներում:

3. ԵՐԿԱՐԱՏԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՐԱՏԱՊ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հիմնվելով իր խորհրդակցությունների վրա՝ Խորհուրդը առաջարկում է, որ կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցությունն արձագանքի չորս ռազմավարական մարտահրավերներին մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում.

- Իրականություն դարձնել **ցկյանս ուսումնառությունն ու ուսումնառուի շարժունությունը**,
- Կատարելագործել ապահովման և արդյունքների **որակն ու արդյունավետությունը**,
- Օժանդակել **անաչառությանն ու ակտիվ քաղաքացիությանը**,
- Մեծացնել **նորարարությունն ու ստեղծարարությունը՝ ներառյալ ձեռներեցությունը**, կրթության և ուսուցման բոլոր մակարդակներով:

Այս մարտահրավերներին պետք է արձագանքել համակարգերին ուղղված համատեղ քաղաքականությամբ՝ որպես ամբողջություն (դպրոցներ, բարձրագույն կրթություն, մասնագիտական կրթություն և ուսուցում/ՄԿՈՒ, մեծահասակների ուսումնառություն): Ուստի, ցկյանս ուսումնառությունը այն հիմնական հեռանկարն է, որը սատարում է բոլոր վերոնշյալ մարտարհրավերներին:

Մինչ սույն ռազմավարական մարտահրավերները քաղաքականության համագործակցության հիմք կհամարեն 2009-2020թթ. ժամանակահատվածը, առաջնային ուշադրության արժանի ավելի ուրույն նպատակներ պետք է հաստատվեն կարճ ժամկետներում: Հետևյալ հատվածները՝ 3.1-ից մինչև 3.4, երկարաժամկետ ռազմավարական մարտահրավերները սահմանել են ավելի մանրամասնորեն և առաջարկում են համապատասխան գերակայություններ սկզբնական ժանանակաշրջանի համար՝ 2009-2010:

[6] SEC(2008) 2293, էջ 69, 89, 148

Ռազմավարական մարտահրավեր՝ իրականություն դարձնել ցկյանս ուսումնառությունն ու ուսումնառուի շարժունությունը

Ցկյանս ուսումնառությունը ընդգրկում է ուսումնառությունը բոլոր փուլերում (նախադպրոցականից մինչև պաշտոնաթողություն) և բոլոր համատեքստերում՝ ներառյալ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ձևաչափերը: Անդամ պետությունները համաձայնության եկան մինչև 2006թ. ստեղծել ցկյանս ուսումնառության կապակցված և համապարփակ ազգային ռազմավարություններ:

Այսպիսի ռազմավարությունների իրագործումը դեռ համարվում է մարտահրավեր: Որակավորումների Եվրոպական Շրջանակը (ՈԵՇ)[7] համարվում է առաջընթացի արդյունք, որը շարժման մեջ դրեց որակավորումների ազգային շրջանակների վերաբերյալ աշխատանքի զարգացումը շատ երկրներում՝ ներառյալ ուսումնառության արդյունքների վրա նոր կենտրոնացումը (օր.՝ ինչ գիտի սովորողը, ինչ է հասկանում և ավելի շատ ինչ է ինքը ի վիճակի անելու, քան ուսումնառության գործընթացը): Մեծացնելով որակավորումների թափանցիկությունը՝ ՈԵՇ-ը կխթանի ուսումնառուների և աշխատողների շարժունությանը և կհեշտացնի մուտքի հնարավորությունը դեպի ցկյանս ուսումնառություն:

Սակայն մեծ աշխատանք կա անելու ուսումնառության ճկուն ուղիների հաստատման (օրինակ ՄԿՈՒ և բարձրագույն կրթության միջև ավելի լավ անցումների միջոցով), ինչպես նաև ոչ ավանդական ուսումնառուների համար համալսարաններ բացելու կամ ոչ ֆորմալ ուսումնառության վավերացման համար: Ուսումնառությունը պետք է լինի գրավիչ և մատչելի բոլոր քաղաքացիների համար՝ անկախ տարիքից, գիտելիքի պաշարից, զբաղվածությունից կամ սոցիալական կարգավիճակից: Կրթության և ուսուցման տարբեր ճյուղերի, ինստիտուցիոնալ պարտականության (ներառյալ ֆինանսավորման կայուն մոդելները) և բոլոր շահագրգիռ անձանց հետ գործընկերության ավելի լավ համակարգում է պահանջվում:

Ուսումնառուի շարժունությունը ցկյանս ուսումնառության և մարդկանց աշխատունակության և հարմարվողականության կառուցման էական տարրն է: ԵՄ ծրագրերի գնահատումները ցույց են տալիս, որ շարժունությունը քանդում է մարդկանց և խմբերի միջև արգելապատնեշը, Եվրոպական քաղաքացիության դրական ազդեցությունը դարձնում է ավելի շոշափելի և օգնում է մարդկանց լինել ավելի հարմարվողական ու շարժուն, երբ մտնում են աշխատաշուկա: Կանոնավոր բնույթ պետք է կրի սովորողի խաչաձև շարժունությունը, այլ ոչ թե բացառումը, որն ընդունված է այսօր: Վերջինիս հասնելու համար բոլոր դերակատարների նոր պարտականություններ և ավելի լայնածավալ ֆինանսավորում կպահանջվի:

[7] OJ C 111, 6.5.2008, էջ 1

2009-2010թթ. առաջնային թեմաները.

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է գերակայությունը տան հետևյալ հատվածների իրագործմանը.

- **Ցկյանս ուսումնառության ռազմավարություններ:** Ավարտել ցկյանս ուսումնառության ազգային ռազմավարությունների իրագործման գործընթացը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության և ուղղորդման վավերացման վրա:
- **Որակավորումների Եվրոպական Շրջանակ:** Մինչև 2010թ. կապակցել բոլոր որակավորումների ազգային համակարգերը ՈԵՇ-ին և աջակցել չափորոշիչների ու որակավորումների, գնահատման ու վավերացման ընթացակարգերի, կրեդիտների փոխանցման, ուսումնական պլանի և որակի ապահովման համար ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցման կիրառմանը:

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է կենտրոնանան քաղաքականության համագործակցության մշակման վրա.

- **Ուսումնառության շարժունության մեծացում:** Միասնական աշխատանք՝ վերացնելու արգելապատնեշը և մեծացնելու ուսումնառության շարժունության հնարավորությունները Եվրոպայում ու ամբողջ աշխարհում կրթության և՛ բարձրագույն, և՛ այլ մակարդակների համար՝ ներառյալ նոր նշանակետերն ու ֆինանսավորման գործիքները Եվրոպական և ազգային մակարդակներով[8]:

Ռազմավարական մարտահրավեր՝ կատարելագործել ապահովման և արդյունքների որակն ու արդյունավետությունը

Եվրոպական Խորհուրդը հաճախ է շեշտել, որ բարձրորակ կրթության և ուսուցման համակարգերը, որոնք և՛ արդյունավետ են, և՛ անաչառ, Եվրոպայի հաջողության համար առանցքային կարևորություն ունեն:

Գլխավոր մարտահրավերը բոլորի կողմից առանցքային կարողությունների ձեռքբերման ապահովումն է[9]՝ միևնույն ժամանակ կատարելագործելով գերազանցությունը, որը թույլ կտա Եվրոպային պահել իր ուժեղ, գլոբալ դիրքը բարձրագույն կրթության ոլորտում: Ուսումնառության արդյունքները բոլոր մակարդակներով պետք է համապատասխանեն մասնագիտական և անձնական կյանքին:

---

8 Երիտասարդության շարժունության վերաբերյալ Խորհրդի 20/21.11.2008-ի եզրակացությունները

9 OJ L 394, 30.12.2006, էջ 10

Ուսուցիչների, դասընթացավարների և կրթության բնագավառին առնչվող անձանց որակն ամենակարևոր ներդպրոցական գործոնն է, որը ազդում է ուսանողի կատարողականության վրա[10]: Հաջորդ 15 տարիների ընթացքում մոտավորապես երկու միլիոն տարեց ուսուցիչներ պետք է փոխարինվեն. «մանկավարժ» մասնագիտությունը պետք է դառնա կարիերայի ավելի գրավիչ ուղղություն[11]:

Կայուն հիմքի վրա հիմնված բարձր որակի արդյունքներ ապահովելու համար կրթության և ուսուցման համակարգերի ղեկավարմանը նույնպես պետք է արձագանքել: Կրթության և ուսուցման հաստատություններին պետք է ավելի մեծ ինքնավարություն տրվի. վերջիններս պետք է ավելի բաց լինեն քաղաքացիական հասարակության ու ձեռնարկությունների համար, ինչպես նաև դրանք պետք է որակի ապահովման արդյունավետ համակարգերի ենթակա լինեն:

Բարձր որակի կարելի է հասնել միայն ռեսուրսների արդյունավետ և կայուն կիրառման միջոցով: Որպես տնտեսական աճի և սոցիալական ներգրավման էական գործոն՝ կրթության և ուսուցման ոլորտում ներդրումները պետք է մեծացվեն ակներևության հիմքի զարգացման միջոցով[12]:

2009-2010թթ. առաջնային թեմաները

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է գերակայությունը տան հետևյալ հատվածների իրագործմանը.

- **Լեզուներ:** Հնարավորություն տալ քաղաքացիներին բացի մայրենի լեզվից հաղորդակցվել երկու լեզուներով, օժանդակել լեզվի ուսուցմանը ՄԿՈՒ-ում ու մեծահասակների համար, և վերաբնակիչներին հնարավորություն տալ սովորել նրանց հյուրընկալող երկրի լեզուն[13]:
- **Ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացում:** Կենտրոնանալ ուսուցիչների սկզբնական ուսուցման գլխավոր տարրերի, ինչպես նաև ներգրավված ուսուցիչների, դասընթացավարների և անձնակազմի մասնագիտական շարունակական զարգացման հնարավորությունների ծավալի ու որակի մեծացման վրա (օրինակ ղեկավարման կամ ուղղորդման գործունեության մեջ):
- **Ղեկավարում և ֆինանսավորում:** Իրագործել բարձրագույն կրթության (ներառյալ ուսումնական պլանները)[14], ՄԿՈՒ որակի ապահովման շրջանակի[15] արդիականացման օրակարգը և մշակել չափորոշիչներ մեծահասակների ուսումնառության համար:

10 OJ L 394, 30.12.2006, էջ 10
11 COM(2007) 392
12 Խորհրդի 2007թ. նոյեմբերի 15-ի եզրակացությունները, OJ C 300, 12.12.2007, էջ 6
13 COM(2006) 481
14 COM(2008) 566
15 COM(2006) 208

Օժանդակել փաստերի վրա հիմնված քաղաքականությանը և փորձին[16]՝ հատուկ շեշտ դնելով պետական և մասնավոր ներդրումների կայունությունը հաստատելու վրա:

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է կենտրոնանան հետևյալ հատվածների քաղաքականության համագործակցության զարգացման վրա.

- **Ընթերցանության, մաթեմատիկայի և գիտության առանցքային հմտություններ:** Կազմել գրաճանաչության հարցերով զբաղվող մարդկանց բարձր մակարդակի մի խումբ աշակերտների ընթերցանության կատարողականության անկման խնդիրները բացահայտելու[17] և ԵՄ-ում գրաճանաչության մակարդակների կատարելագործմանը միտված առաջարկներ անելու համար: Ինտենսիվացնել ներկայիս համագործակցությունը՝ զարգացնելու մաթեմատիկայի և գիտության աճը կրթության ու ուսուցման բարձր մակարդակներում, ինչպես նաև ընդլայնել գիտության ուսուցումը: Անդամ պետությունները պետք է ի նկատի ունենան առանցքային հմտությունների ձեռքբերման վերաբերյալ ազգային գործողության պլանների հաստատումը:
- **«Նոր Հմտություններ Նոր Աշխատանքների համար»:** Երաշխավորել, որ հմտության հետագա կարիքների գնահատումն ու աշխատաշուկայի կարիքներին համապատասխանությունը լիովին հաշվի են առնված կրթության և ուսուցման պլանավորման բոլոր գործընթացներում:

3.3 Ռազմավարական մարտահրավեր՝ օժանդակել անաչառությանն ու ակտիվ քաղաքացիությանը

Կրթության և ուսուցման քաղաքականությունը պետք է հնարավորություն տա բոլոր քաղաքացիներին, անկախ տարիքից, սեռից և սոցիալ-տնտեսական կարգավիճակից, կյանքի ընթացքում ձեռք բերել, կատարելագործել ու զարգացնել թե՛ աշխատանքին բնորոշ հմտություններ, թե՛ հետագա ուսումնառությանը, ակտիվ քաղաքացիությանը և միջմշակութային երկխոսությանը խթանելու համար պահանջվող առանցքային կարողություններ:

Չնայած այն փաստին, որ հենց սկզբից անաչառությանը վերաբերող խնդիրները կենտրոնական տեղ են զբաղեցրել ՕՄՀ-ում, գլխավոր մարտահրավերները դեռևս ուժի մեջ են մնում: Դեռևս յուրաքանչյուր վեցերորդ անձ ավարտում է դպրոցը միայն պարտադիր կրթության ձեռքբերման մակարդակով: Վերաբնակչի կարգավիճակ ունեցող շատ ուսումնառուներ կրթության և ուսուցման ոլորտում ունեն ավելի քիչ հաջողություն, քան իրենց հասակակիցները: Եթե տղաները ավելի հաճախ են դուրս մնում դպրոցից և թույլ են ընթերցանության մեջ, ապա աղջիկները ներկայացված չեն մաթեմատիկայի, գիտության և

[16] SEC(2007) 1098
[17] SEC(2008) 2293

տեխնոլոգիայի շրջանավարտների շարքում: Կրթության ձեռքբերման թերի մակարդակ ունեցող մեծահասակները յոթ անգամ ավելի քիչ են ներգրավվում շարունակական կրթության և ուսուցման մեջ, քան բարձր մակարդակ ունեցողները: Սովորողի սոցիալ-տնտեսական կարգավիճակը դեռևս էական ազդեցություն ունի ցանկացած մակարդակի կրթության և ուսուցման մեջ մուտք գործելու ու հաջողության հասնելու հնարավորությունների վրա[18]: Սրանք այն հիմնական մարտահրավերներն են, որոնց պետք է արձագանքել նպաստելու համար սոցիալական ներգրավմանն ու հաղթահարելու աշխատանքի մատակարարման խոչընդոտները:

Կրթության այս խոչընդոտներին կարելի է արձագանքել բարձրորակ նախադպրոցական կրթությամբ և նպատակաուղղված աջակցությամբ, որը պետք է համատեղել կրթության և ուսուցման հիմնական մասի մեջ ներգրավմամբ:

Կրթությունը պետք է նպաստի միջմշակութային հմտություններին, ժողովրդավարական արժեքներին, հիմնարար իրավունքներին և խտրականության դեմ պայքարին՝ տարբեր կարգավիճակներում գտնվող երիտասարդները պետք է կարողանան դրականորեն փոխազդել իրենց հասակակիցների վրա:

2009-2010թթ. առաջնային թեմաները

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է գերակայությունը տան հետևյալ հատվածներում ավելի լավ արդյունքների ձեռքբերմանը.

- **Դպրոցը վաղ լքելը:** Ուժեղացնել կանխարգելիչ մոտեցումները, ավելի սերտ համագործակցություն ծավալել ընդհանուր և մասնագիտական ճյուղերի միջև, և կրթությունից դուրս մնացածների առջև ծառացած արգելքները վերացնել ու օժանդակել կրթությանն ու ուսուցմանը վերադառնալու միտումներին:

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է կենտրոնանան հետևյալ հատվածների քաղաքականության համագործակցությունը զարգացնելու վրա.

- **Նախադպրոցական կրթություն:** Օժանդակել անաչառ մուտքի հնարավորությանն ու մատակարարման կատարելագործված որակին, ինչպես նաև ուսուցչին ուղղված աջակցությանը:
- **Վերաբնակիչներ:** Զարգացնել լավագույն փորձերի երկկողմ ուսումնառությունը վերաբնակչի կարգավիճակ ունեցող երեխաների կրթության համար[19]:
- **Հատուկ կարիքներ ունեցող սովորողներ:** Օժանդակել և աջակցել անհատական ուսումնառությանը լավ համակարգված ծառայությունների միջոցով: Ամբողջացնել

[18] SEC(2008) 2293
[19] COM(2008) 423

ծառայությունները հիմնական դպրոցական համակարգի մեջ և ապահովել հետագա կրթությունն ու ուսուցումը զարգացնելու ուղիները:

3.4. Ռազմավարական մարտահրավեր՝ մեծացնել նորարարությունն ու ստեղծարարությունը, ինչպես նաև ձեռներեցությունը կրթության և ուսուցման բոլոր մակարդակներով

Նորարարությունն ու ստեղծարարությունը գլխավոր գործոնն են ձեռներեցության զարգացման համար և ունեն առանցքային կարևորություն Եվրոպայի՝ միջազգային մրցակցության ու հարատև զարգացման մարտահրավերներին արձագանքելու կարողության համար:

Առաջին մարտահրավերն այն է, որ բոլոր քաղաքացիները կարողանան ձեռք բերել առանցքային կարողություններ, ինչպիսիք են սովորելու համար սովորելն ու հաղորդակցման հմտությունները, նախաձեռնության և ձեռներեցության միտումները, թվերի կիրառման կարողությունը (ներառյալ հաղորդակցման գրագիտությունը[20]), մշակութային իրազեկվածությունն ու արտահայտչականությունը[21]: Վերջիններս, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառումը (մինչև 2010թ.անդամ պետությունները պետք է ստեղծեն մեծ արագություն ունեցող ինտերնետ, որը հասանելի կլինի բոլոր դպրոցների համար[22]), պետք է ներառվեն ուսումնական պլաններում, մանկավարժությունում և որակավորումներում: Համալսարան-գործարարություն ընդլայնված համագործակցությունը կխթանի ուսանողների և հետազոտողների նախաձեռնություններին:

Երկրորդ մարտահրավերը կրթություն-հետազոտություն-նորարարություն գիտելիքային եռանկյունու լիարժեք գործելն ապահովելն է: Նորարարության և Տեխնոլոգիայի Եվրոպական Ինստիտուտը կարող է փոփոխություն կատարել կրթության և ուսուցման ոլորտում գերազանցության հասնելու համար՝ մասնավորապես խրախուսելով կարգերի բազմազանությանը և ուսումնական հաստատությունների ու գործարարության գործընկերությանը: Ձեռներեցության աշխարհի և կրթության, ուսուցման ու հետազոտության տարբեր մակարդակների ու ճյուղերի գործընկերությունը կարող է նպաստել՝ ապահովելու ավելի լավ կենտրոնացում աշխատաշուկայում պահանջվող հմտությունների և կարողությունների վրա, ինչպես նաև խթանել ուսումնառության բոլոր ձևաչափերում առկա նորարարությանն ու ձեռներեցությանը: Եվրոպական Հետազոտական Տարածքի և համաշխարհային դասի մարդկանց խմբերի ստեղծումը պետք է աջակցի բազմաթիվ այսպիսի գործընկերություններին:

[20] COM(2007) 833
[21] OJ L 394, 30.12.2006, էջ 10
[22] Եվրոպական Խորհրդի 2008թ. մարտի եզրակացությունները, պարագրաֆ 7, տե՛ս նաև SEC(2008) 2629 և COM(2007) 833 հաղորդակցման գրագիտության վերաբերյալ

Ստեղծարարության և Նորարարության Եվրոպական տարի 2009-ը կօգնի արձագանքել գլխավոր մարտահրավերներից մի քանիսին: Քաղաքականության համագործակցության մշակման համատեքստում հետազոտությունը, վերլուծությունը և ստեղծարարական ու նորարարական հմտությունների չափագրման եղանակի վերաբերյալ մտքերի փոխանակումը ԵՄ մակարդակով միջազգային համապատասխան կազմակերպությունների կողմից աջակցության կարիք ունեն:

2009-2010թթ. առաջնային թեմաները

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է գերակայությունը տան հետևյալ հատվածների իրագործմանը.

- **Առանցքային կարողություններ:** Ինտեգրել առանցքային կարողությունները ուսումնական պլանների, գնահատման և որակավորումների մեջ ամբողջովին[23]:

Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է կենտրոնանան.

- **Նորարարությանը քաջալերող հաստատություններ:** Օժանդակել ստեղծարարությանն ու նորարարությանն ուսուցման և ուսումնառության առանձնահատուկ մեթոդներ մշակելու միջոցով (ներառյալ ICT նոր գործիքների և ուսուցիչների վերապատրաստման կիրառում):
- **Գործընկերություն:** Գործընկերություն ծավալել կրթություն և ուսուցում ապահովողների ու գործարարության, հետազոտական հաստատությունների, մշակութային դերակատարների ու ստեղծարար ձեռնարկությունների միջև:

4. ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԵՏԱԳԱ ԲԱՑ ՄԵԹՈԴԻ ՀԱՄԱՐ

Կրթության և ուսուցման մեջ համակարգման բաց մեթոդի հաջողությունը կախված է քաղաքական պարտականությունների կատարումից և դրա՝ ազգային բարեփոխումների վրա իրական ազդեցություն ունենալու ու վերջիններիս աջակցելու կարողությունից: Քաղաքականության համագործակցությունը պետք է լինի համապատասխան և հստակ, ունենա տեսանելի արդյունքներ և ներգրավի շահագրգիռ կողմերին ու քաղաքականություն մշակողներին: Գլխավորը գործընթացը համաձայնեցված նպատակներին տանելն է:

[23] OJ L 394, 30.12.2006, էջ 10

4.1. Ղեկավարում և գործընկերություն

Ցկյանս ուսումնառության հեռանկարը կրթության և ուսուցման տարբեր ճյուղերում համակարգման և առաջնային ձևաչափի կոչ է անում: Քաղաքականության որոշակի օրակարգեր են սահմանվել դպրոցների[24], ՄԿՈՒ[25], բարձրագույն[26] և մեծահասակների կրթության[27] համար: Բոլոր ճյուղերում քաղաքականության փոխանակումն ու իրագործման աշխատանքը պետք է նպաստի ռազմավարական համընդհանուր գերակայություններին:

Ամփոփելով այս ամենը՝ կարելի է նշել, որ կրթության և ուսուցման քաղաքականությամբ զբաղվող առկա ինֆորմալ բարձր մակարդակի խմբի դերակատարությունը պետք է մեծացնել՝ թույլ տալու, որ այն ՕՄՀ-ին ուղղորդելու ռազմավարական դերակատարություն ունենա (բոլոր ճյուղերում աշխատանքի գործընթացի մշտադիտարկում և գերակայությունների որոշարկում, մուտքային տվյալների պատրաստում Եվրոպական Խորհրդում քաղաքականության վերաբերյալ քննարկումների համար, ինչպես նաև երաշխավորում, որ կրթության ու ուսուցման վերաբերյալ քաղաքականության համագործակցությունը ծավալվում է Լիսաբոնի գործընթացի և ազգային քաղաքականությունների համաձայն):

Առաջնահերթություն պետք է տալ նաև շահագրգիռ կողմերի և սոցիալական ու քաղաքացիական հասարակության գործընկերների լիարժեք ներգրավմանը, որոնք ունեն զգալի ներդրում և՛ քաղաքական երկխոսություն ծավալելու, և՛ իրագործման գործընթացի մեջ: Հանձնաժողովը կանցկացնի տարեկան համաժողով Եվրոպական շահագրգիռ կազմակերպությունների հետ, և համապատասխան շահագրգիռ անձիք սիստեմատիկաբար կներգրավվեն հավասար ուսումնառության գործընթացների մեջ:

4.2. Երկկողմ ուսումնառություն, նորարարության փոխանցում և քաղաքականության մշակում

Կրթության և ուսուցման ոլորտում երկկողմ ուսումնառությունը ՕՄՀ-ի կենտրոնական տարրն է: Այն Եվրոպական քաղաքականության նախաձեռնություններին ապահովում է մուտքային տվյալներով և խթանում ազգային քաղաքականության զարգացմանը: Վերջինս կարևոր միջոց է՝ տարածելու և կիրառելու Եվրոպական այնպիսի գործիքներ, ինչպիսիք են

---

24 COM(2008) 425

25 Մասնագիտական Կրթության և Ուսուցման (ՄԿՈՒ) Եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայությունների վերաբերյալ Խորհրդի 2008թ. նոյեմբերի 20/21-ի եզրակացություններ

26 COM(2006) 208 և Բոլոնիայի միջկառավարական գործընթաց

27 COM(2006) 614; COM(2007) 558

Որակավորումների Եվրոպական Շրջանակը[28] կամ ցկյանս ուսումնառության առանցքային կարողությունների վերաբերյալ առաջարկը[29]:

Հետագայում նպատակը կլինի ամրապնդել հավասար ուսումնառությունը, ինչպես նաև քաղաքական մակարդակով մեծացնել նրա ազդեցությունը՝ երաշխավորելով, որ այն ամբողջությամբ արձագանքում է վերոնշյալ առաջնային մարտահրավերներին: Գործընթացները պետք է հիմնված լինեն հստակ մանդատների, ժամանակացույցերի և պլանավորած ելքային տվյալների վրա (օր. քաղաքականության առաջարկներ կամ ձեռնարկներ, լավագույն փորձի օրինակների համառոտ ձեռնարկներ): Դրանք պետք է բավական ճկուն լինեն առաջացող խնդիրների և քաղաքականության թեմաների զարգացման հետևանքով փոփոխվելու կամ տեղայնանալու համար: Քաղաքականության գերակայությունների զարգացման վրա հիմնված հավասար ուսումնառության և վերանայման շրջանառվող ծրագիր պետք է մշակվի՝ մեկնակետ համարելով 2009-10թթ. համար սահմանված քաղաքականության գերակայությունները:

Ի հավելումն՝ հետևյալ գործիքները նույնպես կկիրառվեն.

- Ցկյանս Ուսումնառության Ծրագիրը[30] կօժանդակի նոր մոտեցումների և նորարարության մշակմանը, փորձարկմանը, փոխանցմանն ու իրագործմանը:
- Այնպիսի գործակալությունները, ինչպիսիք են Cedefop-ը և Եվրոպական Կրթական Հիմնադրամը, ցանցերը, ինչպես Eurydice-ը, և փորձագետների խմբերը[31], ներառյալ համագործակցությունը համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, կօժանդակեն հետազոտությանն ու վերլուծությանը:
- Որոշ արտաքին գործընկեր երկրների հետ քաղաքականության երկխոսությունը պետք է ամրապնդել և կապակցել OMC-ին՝ ապահովելով ավելի լայն համեմատական շրջանակ ու նոր գաղափարներ:

4.3. Գործընթացի ավելի հստակ հաշվետվություն և տեսանելիություն

Հանձնաժողովը և Խորհուրդը յուրաքանչյուր երկու տարին մեկ ներկայացնում են առաջընթացի համատեղ հաշվետվություն, որը հիմնված է անդամ պետությունների ազգային հաշվետվությունների վրա, որոնք նախանշում են իրենց քաղաքականության գործողությունները՝ արձագանքելու OMC-ի համընդհանուր նպատակներին: Հետագա

28 OJ C 111, 6.5.2008, էջ 1
29 OJ L 394, 30.12.2006, էջ 10
30 OJ L 327, 24.11.2006, էջ 45
31 Սա իր մեջ ներառում է Կրթության և Ցկյանս Ուսումնառության Հետազոտության Կենտրոնը, Հեռանկարային Տեխնոլոգիական Ուսումնառության Ինստիտուտը և կրթության ոլորտում տնտեսագետների և սոցիոլոգների փորձագիտական ցանցերը:

հաշվետվությունները պետք է ամենայն մանրամասնությամբ կենտրոնանան գործողության որոշակի առանձնահատուկ գերակայությունների վրա: Հետևաբար, ենթադրվում է, որ առաջընթացի հաջորդ համատեղ հաշվետվությունը (2010թ.) կկենտրոնանա 3-րդ հատվածում նշված մեկ կամ ավելի հրատապ գերակայությունների վրա: Համատեղ հաշվետվությունները հետագայում կհաստատվեն առանձին երկրների իրավիճակի գնահատումը ներառելու միջոցով, իսկ երկրները իրենց հերթին կներգրավվեն Լիսաբոնի Ազգային Բարեփոխումների Ծրագրերի կրթության, ուսուցման և հմտությունների բաղադրիչների գնահատման մեջ: Ինչ վերաբերում է ներկա վիճակին, ապա հաշվետվության պարբերականության (ամեն 2 տարին մեկ) ոչ մի փոփոխություն չի ենթադրվում:

Հետագայում մեծ ջանքեր պետք է գործադրվեն՝ մեծացնելու տեղեկացվածությունը կրթության և ուսուցման ոլորտում համագործակցության բաց մեթոդի կողմից ապահովված օժանդակության ու հնարավորությունների, մասնավորապես նրա գերակայությունների և արդյունքների մասին Եվրոպական, ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Կայքէջը կապահովի քաղաքականության վերաբերյալ նախաձեռնությունների մասին տեղեկատվությամբ և ցույց կտա ՕՄՀ-ի համատեքստում հատկորոշված լավագույն փորձի կոնկրետ օրինակներ:

4.4. Ցուցիչներ և նշածողեր

Առկա հինգ նշածողերը

«Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի համատեքստում մշակված ցուցիչներն ու նշածողերը օգտակար են Եվրոպական մակարդակով գործընթացը մշտադիտարկելու և հաղորդագրելու համար: Այս հինգ նշածողերից երեքը (դպրոցը վաղ լքողների, ավագ միջնակարգային կրթության և ցկյանս ուսումնառությանը մեծահասակների մասնակցության վերաբերյալ) աճի և աշխատանքների ամբողջացված ուղենիշների մի մասն են կազմում:

Ինչպես ցույց է տրված 2.1 մասում՝ 2010թ. համար սահմանված հինգ նշածողերը հաղթահարելուն միտված առաջընթացը եղել է անբավարար: Ուստի կարևոր է, որ այս հատվածներում կատարողականությունը զարգացնելու համար գործադրվող ջանքերը մեծացվեն: Ամփոփելով՝ հարկ է նշել, որ անդամ պետությունները պետք է ընդունեն ազգային նշանակետեր այն հատվածներում, որտեղ Եվրոպական նշածողերը համաձայնեցվել են:

Նշածողերի փոփոխում մինչև 2010թ.

Մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում քաղաքականության համագործակցությանը պետք է օժանդակեն նշածողերը, որոնք լիովին արտահայտում են որոշարկված երկարաժամկետ ռազմավարական մարտահրավերները, և «Նոր Հմտություններ Նոր Աշխատանքների համար» օրակարգի գլխավոր ասպեկտը՝ բնակչության մեջ հմտություններն ու զբաղվածությունը կատարելապես զարգացնելու կարիքը: Կրթության և ուսուցման հետագա նշածողերը պետք է նույնպես բավարար ճկուն լինեն՝ ի նկատի ունենալու նշանակետերն ու ցուցիչները, որոնք կկիրառվեն մինչև 2010թ. Աճի և Աշխատանքների ԵՄ ռազմավարությունում: Հիմք ընդունելով սա՝ Հանձնաժողովը և անդամ պետությունները կհիմնվեն փորձի վրա՝ ըստ առկա նշածողերի, և կբացահայտեն նշածողերի նոր շարք հետևյալ ուղղություններում.

- Վերանայել և, եթե հարկ կա, կատարելագործել առկա նշածողերը, օրինակ՝ գրաճանաչության հմտությունների ցածր մակարդակ ունեցողների նշածողի հնարավոր մեծացումը ընդգրկի նաև մաթեմատիկայի և գիտության ճյուղերը,
- Միավորվել նշածողերի շրջանակի նշանակետերին, որոնք սահմանվել են 2002թ. Բարսելոնայի Եվրոպական Խորհրդի կողմից (օր.՝ նախադպրոցական կրթությանը մասնակցության և վաղ հասակում լեզվի ուսուցման հնարավորության վերաբերյալ),
- Ներկայացնել նշածողեր՝ կառուցելով այնպիսի թեմաների հիման վրա, որոնք ի հայտ են եկել համագործակցությունն սկսելու պահից, կամ արտահայտելով քաղաքական նոր գերակայություններ (օրինակ՝ երրորդային մակարդակի կրթության և ուսումնառության շարժունության մեջ),
- Մեկնարկել զարգացմանն ուղղված աշխատանքը՝ ստեղծելու նոր ցուցիչներ կրթության ձեռքբերման ու զբաղվածության օղակի, ինչպես նաև նորարարության և ստեղծարարության (ներառյալ ձեռներեցություն) կրթության համար:

Այսպիսով, Հանձնաժողովը կառաջարկի ծավալել քննարկում անդամ պետությունների հետ՝ հետագայում հիմնվելով ՕՄՀ-ի հետևյալ նշածողերի վրա.

4.4.1. Ցկյանս ուսումնառության և շարժունության իրականացում

- *Մեծահասակների մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը:* Առկա նշածողը նախատեսում է մեծահասակների (25-64տ.) 12.5% մասնակցության ցուցանիշ ցկյանս ուսումնառությանը: Չնայած 2002թ. ի վեր շոշափելի առաջընթաց է գրանցվել այս նշածողը հաղթահարելու գործում (ըստ ներկայիս միտումների՝ հավանական է, որ նշածողը կհաղթահարվի մոտ 2017թ.), սակայն անդամ պետությունների միջև այն թերի է մնում: Ելնելով տեխնոլոգիական ու ազգագրական միտումներից և աշխատանքների վրա ներկայիս տնտեսական անկման անխուսափելի ազդեցությունից՝ ավելի հրատապ է դառնում մեծահասակների հմտությունների կատարելագործումն ու

արդիականացումը: Ուստի, Հանձնաժողովը կառաջարկի բարձրացնել ցկյանս ուսումնառությանը մեծահասակների 15% -ի մասնակցության նշաձողը: Շատ կարևոր է նաև, որ անդամ պետությունները կրճատեն ցկյանս ուսումնառությանը մասնակցող ցածր և բարձր հմտություններ ունեցող մեծահասակների մասնակցության անհավասարությունը: Դրա իրագործման համար պետք է սահմանվեն ազգային թիրախներ:

- *Շարժունություն:* Նոր նշաձող պետք է սահմանվի Կրթության և Երիտասարդության Խորհրդի 2008թ. նոյեմբերի եզրակացությունների հիման վրա, որոնք առաջարկում են նպատակներ ուսանողների, աշակերտների, մասնագիտական ճյուղի և ուսուցիչների ու դասընթացավարների շարժունության համար:

4.4.2. Մատակարարման և արդյունքների որակի ու արդյունավետության կատարելագործում

- *Առանցքային հմտությունների ցածր մակարդակ ունեցողներ:* Հետևելով 2008թ. Եվրոպական Գարնանային Խորհրդին, որն արագացրեց անդամ պետություններին այս խնդիրը լուծելու կոնկրետ գործողություններ ձեռնարկել՝ Հանձնաժողովը կառաջարկի նշաձող, որ առանցքային հմտությունների (գրաճանաչություն, մաթեմատիկա և գիտություն) ցածր մակարդակ ունեցող 15տ. պատանիների ցուցանիշը լինի ավելի ցածր, քան 15% միջինը. առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել սեռային անհավասարության կրճատման վրա:
- *Լեզուներ:* Հանձնաժողովը կառաջարկի նոր նշաձող, որ ցածր միջնակարգային կրթությամբ երեխաների առնվազն 80%-ին ուսուցանվի առնվազն երկու օտար լեզու: Սույն առաջարկը հակված կլինի իրականացնել Բարսելոնայի Եվրոպական Խորհրդի պահանջը՝ վաղ հասակից ապահովելու ուսուցում առնվազն երկու օտար լեզուներով: Վերջերս գրանցվել է փոքր տարիքում լեզվի ուսուցման արագ աճ: 2000թ.-ին հանրակրթությունում աշակերտների 40% -ին ուսուցանվում էր երկու օտար լեզու. 2006թ.-ից ի վեր այս ցուցանիշը հասել է 52%-ի: Նպատակը կլինի հետագայում խթանել այս դրական գործընթացին:
- *Ներդրումներ բարձրագույն կրթության մեջ:* Հանձնաժողովը կառաջարկի նոր նշաձող, որ պետական և մասնավոր ներդրումները արդիականացված բարձրագույն կրթության մեջ հասնեն առնվազն ՀՆԱ 2%-ի[32]: Սա կարտահայտվի արդիականացվող բարձրագույն կրթության վերաբերյալ քաղաքականության քննարկումներով՝ սկսած 2005թ. Հեմփթոնի Նախարարական Գագաթնաժողովից, և կձգտի բարձրագույն կրթության մեջ ներդրումների մակարդակները (ներկայումս պետական և մասնավոր աղբյուրներից ՀՆԱ 1.3%) մոտեցնել այնպիսի գլխավոր մրցակիցների մակարդակներին, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Ճապոնիան, որոնց ներդրումների (պետական և մասնավոր) մակարդակը կազմում է յուրաքանչյուրը 2.45% և 1.85%:

[32] COM(2005) 152

- *Կրթության երրորդային մակարդակ:* Հանձնաժողովը կառաջարկի նոր նշածող, որ բարձրագույն կրթությամբ 30-34տ. անձանց ցուցանիշը լինի առնվազն 45%: Այս առաջարկը ցույց է տալիս, որ առաջընթաց է գրանցվել բարձրագույն կրթությամբ 30-34տ. անձանց ցուցանիշում, սակայն, ինչպես արդեն նշվել է, այն կձգտի մոտեցնել ԵՄ կատարողականությունը (ներկայումս 30%) այնպիսի գլխավոր մրցակիցների մակարդակներին, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Ճապոնիան (25-34 տարիքային խմբի մասնակցության մակարդակները կազմում են յուրաքանչյուրը 39% և 54%): Մաթեմատիկայի, գիտության ու տեխնոլոգիայի գծով շրջանավարտների թվաքանակի առկա նշածողը արդեն հաղթահարվել է, և գործընթացը կարելի է դադարեցնել, սակայն այդ ճյուղերում սեռային անհավասարության մշտադիտարկումը պետք է շարունակվի:
- *Աշխատունակություն:* Հանձնաժողովը կառաջարկի ուսումնասիրել կրթության ձեռքբերման տարբեր մակարդակներով մարդկանց՝ աշխատաշուկային մասնակցելու հետ կապված նոր նշածողի մշակումը: Աշխատաշուկայում հաջողություն ունենալը խիստ կապված է անհատի կրթության ձեռքբերման մակարդակի հետ և, ինչպես բնութագրված է Հանձնաժողովի Զեկույցում՝ «Նոր Հմտություններ Նոր Աշխատանքների համար»: Դրա նպատակն է մեծացնել կրթության և գիտության համակարգերի օժանդակումը Լիսաբոնի օրակարգին:

4.4.3. Օժանդակում անաչառությանը և ակտիվ քաղաքացիությանը

- *Նախադպրոցական կրթություն:* Հանձնաժողովը կառաջարկի նոր նշածող նախադպրոցական կրթությանը երեխաների առնվազն 90%-ի (4տ. հասակում) մասնակցության համար: Մասնակցության ԵՄ միջին ցուցանիշը հասնում է արդեն 90%-ի: Չնայած մասնակցության այս համընդհանուր բարձր մակարդակին, էական տարբերություններ կան ազգային կատարողականության մեջ: Սույն առաջարկը կձգտի խթանել դեպի Բարսելոնայի Եվրոպական Խորհրդի պահանջն ուղղված առաջընթացին, որ երեխաներին խնամք տրամադրելիս հաշվի առնվի երեխաների 90%-ը:
- *Դպրոցը վաղ լքողներ:* Հանձնաժողովը կառաջարկի պահպանել առկա անփոփոխ նշածողը, որ 18-24տ. երիտասարդների միայն 10%-ը ունենա միայն ցածր միջնակարգային կրթություն և չմասնակցի կրթությանն ու ուսուցմանը: Նշածողը անփոփոխ թողնելու առաջարկը վկայում է, որ 2002թ. ի վեր առաջընթացն այս կետում դանդաղել է: Հանձնաժողովը ավելի շատ ջանքեր կգործադրի այս գլխավոր նշածողին ուղղված իրական առաջընթաց գրանցելու համար: Ելնելով իրագործման վրա կենտրոնանալու պահանջից՝ ավագ միջնակարգային կրթությունը վերջացնելու նշածողի մշակումը կարելի է դադարեցնել:

4.4.4. Նորարարության և ստեղծարարության, ներառյալ ձեռներեցությունը, կատարելագործում կրթության և ուսուցման բոլոր մակարդակներով

- *Նորարարություն և ստեղծարարություն:* Հանձնաժողովը կառաջարկի մշակել ցուցիչներ և անդամ պետությունների հետ ուսումնասիրել նշածողի մշակման իրագործելիությունը՝ արձագանքելու, թե ինչպես են կրթության համակարգերը խթանում նորարարությանն ու ստեղծարարությանը, ներառյալ ձեռներեցությունը: 2009թ. ընթացքում կատարվելիք փոփոխությունները, Ստեղծարարության և Նորարարության Եվրոպական Տարին պետք է օգնեն՝ ցույց տալու, թե որն է քաղաքականության փոխանակման նոր հատվածը:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթության և ուսուցման քաղաքականությունը դեռ համարվում է խիստ կարևոր՝ ձեռք բերելու աճ և աշխատանքներ, սոցիալական ներգրավում և ակտիվ քաղաքացիություն, բայց այն շարունակում է ունենալ էական մարտահրավերներ: Կրթության գլխավոր հարցերի (գրաճանաչությունը և դպրոցը վաղ լքելը) վերաբերյալ առաջընթացն սպասվածից ավելի դանդաղ է: Ներկայիս կենտրոնացումը տնտեսական ճգնաժամի վրա չպետք է ուշադրությունը շեղի ճշգրիտ երկարաժամկետ, կրթության և ուսուցման ռազմավարական քաղաքականություններ սահմանելուց: Ինչպես արդեն նշվել է սույն զեկույցում, Եվրոպան պետք է արձագանքի կրթական մի շարք պակասորդներին, եթե այն ուզում է խուսափել հետ ընկնելու վտանգից: Այս պատճառներով այժմ ավելի, քան երբևէ կրթության և ուսուցման քաղաքականությունների կատարելագործմանն օժանդակող համակարգման արդյունավետ բաց մեթոդի կարիք կա:

Հանձնաժողովը կոչ է անում Խորհրդին հաստատել կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական հետագա համագործակցության համար առաջարկված սույն շրջանակը, մինչև 2020թ. սահմանված երկարաժամկետ ռազմավարական մարտահրավերների շարքը, 2009-2010թթ. ժամանակահատվածի համար առաջնային խնդիրներն ու առաջարկված կատարելագործված աշխատանքային մեթոդները:

Շրջանակը պետք է վերանայվի, և որոշումների վերաբերյալ ձեռք բերված ցանկացած անհրաժեշտ նկատառում պետք է ընդգրկվի Աճի և Աշխատանքների ԵՄ Ռազմավարության մեջ մինչև 2010թ.: